

**Լ ԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒ ԵՆՈՒ ԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ ԹՅՈՒՆ**

ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի համակարգն իր գործունեությունն իրականացնում է երկու հիմնական ուղղություններով՝ ընթացիկ և կադաստրի զարգացման ծրագրերով նախատեսված աշխատանքներ:

ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հիմնական նպատակը ԼՂՀ տարածքում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի արդյունավետ վարման ապահովումն ու անշարժ գույքի շուկայի զարգացման խթանումն է:

2000 թվականից առայսօր կադաստրային քարտեզագրում է իրականացվել Ստեփանակերտ քաղաքում, ԼՂՀ Ասկերանի, Հադրուբի, Մարտակերտի, Մարտունու, Շուշիի շրջաններում լրիվությամբ, ինչպես նաև Քաշաթաղի շրջանի 3 և Շահումյանի շրջանի 4 համայնքներում:

2000 թվականից առայսօր ԼՂՀ տարածքում գրանցվել է 111 266 անշարժ գույքի միավոր:

2009 թվականից սկսած սահմանների ամրացման աշխատանքներ իրականացվել են ԼՂՀ 7 շրջանների համայնքներում:

Օրենսդրություն

2013 թվականին ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մշակվել և ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են ներքոհիշյալ նորմատիվ իրավական ակտերը՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 21.02.2013թ. ՀՕ-8-Ն

2. «Աշխարհագրական անվանումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 21.02.2013թ. ՀՕ-9-Ն

3. «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 21.02.2013թ. ՀՕ-10-Ն

4. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 21.02.2013թ. ՀՕ-7-Ն

5. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին 21.02.2013թ. ՀՕ-6-Ն

6. «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին 21.02.2013թ. ՀՕ-5-Ն

7. «Հողի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին 27.03.2013թ. ՀՕ-11-Ն

8. «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին 30.05.2013թ. ՀՕ-24-Ն

9. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին 27.11.2013թ. ՀՕ-55-Ն

ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մշակվել և ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել են ներքոհիշյալ նորմատիվ իրավական ակտերը՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1049-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին 25.01.2013թ. N 15-Ն

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող անշարժ գույքի կադաստրի զարգացման 2013 թվականի համալիր ծրագիրը հաստատելու մասին 26.02.2013թ. 77-Ա

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի N 579 որոշման մեջ լրացումներ կատարելու, 2002 թվականի հոկտեմբերի 22-ի N 13 և 2002 թվականի նոյեմբերի 26-ի N 60 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին 30.04.2013թ. N244-Լ

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի N 72-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 30.04.2013թ. N 245-Լ

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 21-ի N 433-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 06.06.2013թ. 346-Լ

6. Ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին 12.06.2013թ. 354-Ա

7. Ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին 27.06.2013թ. 411-Ա

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013թվականի պետական բյուջեյում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013թվականի հունվարի 11-ի N 1-Լ և 2013թվականի փետրվարի 26-ի N 77-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին 09.09.2013թ. 592-Լ

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 19-ի N 419-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 12.09.2013թ. 617-Լ

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 331-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին 25.09.2013թ. 666-Լ

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2013թ. հաշվետվության /հողային հաշվեկշռի/ մասին 08.11.2013թ. 773-Լ

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 29-ի N 485-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 26.11.2013թ. 819-Լ

Հաշվետու տարվա ընթացքում մշակվել են նաև ԼՂՀ համայնքների հողերի կատեգորիաներ փոխելու մասին 37 ԼՂՀ կառավարության որոշումների նախագծեր, որոնք սահմանված կարգով ընդունվել են ԼՂՀ կառավարության համապատասխան որոշումներով:

2013 թվականին ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մշակվել և ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել են հետևյալ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը`

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում անշարժ գույքի գնահատողի մասնագիտական որակավորման ստուգման կարգը և անշարժ գույքի գնահատողի մասնագիտական որակավորման վկայականի ձևը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2002 թվականի դեկտեմբերի 17-ի N 61-01/01 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 20.05.2013թ. N93-Լ

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2003 թվականի հունիսի 12-ի թիվ 117-Կ և 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 18-Կ-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին 20.06.2013թ. N101-Լ

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 19-Կ/Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 20.06.2013թ. N102-Լ

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2009 թվականի

փետրվարի 25-ի թիվ 22-Կ/Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 20.06.2013թ. N103-Ն

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 89-Կ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 20.06.2013թ. N104-Ն

6. «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների և կատարվող աշխատանքների առավելագույն գները (սակագները) հաստատելու մասին 20.12.13թ. N 189-Ն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մասին հաշվին իրականացված աշխատանքներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 2013 թվականի ընթացքում ապահովել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող անշարժ գույքի կադաստրի զարգացման 2013 թվականի համալիր ծրագիրը հաստատելու մասին» N 77-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացումն ամբողջությամբ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված 321,521,2 մլն դրամի չափով ֆինանսական միջոցների հաշվին կադաստրի համակարգի կողմից իրականացվել են 10 ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանույթագրման և կադաստրային քարտեզագրման աշխատանքներ` 31044,8 հազ. դրամի չափով

Ծրագրի շրջանակներում իրականացվել են բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանույթագրման աշխատանքներ 600 հեկտարի վրա, կադաստրային քարտեզագրման աշխատանքներ 4206 անշարժ գույքի միավորի և խտացման ցանցի 120 կետերի տեղադրման, չափման և հավասարակշռման աշխատանքներ Հադրուտի շրջանում:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներ` 1000,0 հազ. դրամի չափով

Հաշվառման աշխատանքներ են իրականացվել 31, իսկ գրանցման աշխատանքներ` 3 համայնքներում:

3. Հողի և դրավրա գտնվող շենքերի և շինությունների, անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացման աշխատանքներ` 3000,0 հազ. դրամի չափով

Կատարվել է անշարժ գույքի շուկայի 2012-2013թթ. եռամսյակային, կիսամյակային և տարեկան վերլուծություն: Ծրագրի շրջանակներում իրականացվել են անշարժ գույքի միասնական գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում և վերլուծություն, որոնց արդյունքները պարբերաբար հրատարակվել են «Ազատ Արցախ» հանրապետական թերթում` հասարակության լայն շերտերին շուկայի իրավիճակի մասին իրազեկելու նպատակով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների և համայնքների վարչական սահմանների ամրացման աշխատանքներ` 27872,0 հազ. դրամի չափով

Իրականացվել են Քաշաթաղի շրջանի 52 համայնքների վարչական

սահմաններին ամրացման աշխատանքներ :

5. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների և մասնավորեցվող /սեփականաշնորհվող/ անշարժ գույքի և ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքներ` 14 000.0 հազար դրամի չափով

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հայտերի հիման վրա իրավունքի պետական գրանցում է իրականացվել 1032 միավոր պետական սեփականության և 103 միավոր համայնքային սեփականության նկատմամբ :

6. Գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներ` 300.0 հազար դրամի չափով

Իրականացվել են 300 անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցման աշխատանքներ :

7. Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում, զարգացում և տեղեկատվական բանկի ստեղծում` 7254.4 հազար դրամի չափով

Տեղեկատվական բանկի ստեղծման նպատակով իրականացվել են 5493 կադաստրային գործերի տվյալների մուտքագրում և 564.533 էջերի տեսաներածում :

8. 2014-2017 թվականների գույքահարկի բազայի ձևավորման համար վերագնահատման աշխատանքներ` 5000,0 հազ. դրամի չափով

Ճրագրի իրականացման ընթացքում ստեղծվել է գույքահարկի բազա 41553 անշարժ գույքի միավորի նկատմամբ :

9. Համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի հաշվառման և հողային հաշվետվությունների կազմման աշխատանքներ` 1050,0 հազ. դրամի չափով

Իրականացվել են ԼՂՀ Ասկերանի շրջանի 5 համայնքներում :

10. Իրավունքի պետական գրանցում չստացած պետության սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվառման (չափագրման) աշխատանքներ` 12000,0 հազ. դրամի չափով

Իրականացվել են 528 անշարժ գույքի միավորի նկատմամբ :

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսեր` 189969,5 հազ. դրամի չափով

Ընթացիկ գործունեություն

2013 թվականի արդյունքներով ընդհանուր առմամբ տարածքային ստորաբաժանումների ընթացիկ գործունեության տվյալներով կատարվել են 9697 միավոր անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքներ և տրամադրվել է 7088 միավոր անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն :

Վերոհիշյալ աշխատանքների դիմաց սահմանված կարգով գանձվել և պետական բյուջե է մուտքագրվել 44472,3 հազ.դրամ պետական տուրք, իսկ աշխատանքների արդյունքներով ապահովվել է 189969,5 հազ. դրամ եկամուտ :

Շարունակվել են աշխատանքները **հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում**: Գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2013 թվականին տեսչական ստուգումներ են իրականացվել ԼՂՀ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հարդուրի, Ծոռի, Ծահուլի, Քաջաթաղի շրջաններում և Ստեփանակերտում :

Տեսչության կողմից արձանագրվել են ԼՂՀ հողային օրենսգրքի և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների խախտումներ, որոնք վերացնելու համար տրվել են համապատասխան ցուցումներ:

Ընդհանուր առմամբ պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից 2013 թվականի ընթացքում իրականացվել են 14662,528 հա վարձակալության տրամադրված գյուղնշանակության հողերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքներ, որից Ասկերանի շրջանում՝ 1126,74 հա, Մարտունու շրջանում՝ 1839,3 հա, Մարտակերտի շրջանում՝ 791,67 հա, Յաղոթի շրջանում՝ 3210,828 հա, Ծուռի շրջանում՝ 2,24 հա, Ծահումյանի շրջանում՝ 98,14 հա, Քաշաթաղի շրջանում՝ 7593,61 հա:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ըստ հաստատված ժամանակացույցի իրականացվել են ԼՂՀ տարածքում «Անշարժ գույքի գնահատում» գործունեությունը իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների գործունեության ստուգումներ:

Տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքներն ստուգելու, անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով կոմիտեի նախագահի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից հաշվետու տարվա ընթացքում 2 անգամ ստուգումներ են իրականացվել:

2013 թվականի ընթացքում ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մուտքագրվել է 1125 գրություն՝ տարաբնույթ բովանդակությամբ, որոնք քննարկվել և ընթացքավորվել են ԼՂՀ օրենսդրության սահմաններում:

Համագործակցություն

2013 թվականին շարունակվել է ՀՀ և ԼՂՀ կադաստրի պետական կոմիտեի միջև համագործակցությունը: Համագործակցության հուշագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև ՀՀ կադաստրի համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքը քննարկելու նպատակով 2013 թվականի ընթացքում կազմակերպվել են փոխադարձ այցեր, որի ընթացքում ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միջև ստորագրվել է փոխադարձ համագործակցության համաձայնագիր:

ԼՂՀ պաշտպանության նախարարության և ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչության հետ պայմանավորվածությունների համաձայն 2013 թվականին շարունակվել է ԼՂՀ տարածքում գտնվող պաշտպանության բանակի օբյեկտների և պատմամշակույթային օբյեկտների գրանցման գործընթացը:

ԼՂՀ համայնքների ղեկավարների համար սեմինար-դասընթացների կազմակերպման 2013 թվականի ծրագրի շրջանակներում կոմիտեի նախագահի տեղակալի կողմից ԼՂՀ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրությունն թեմայով անց են կացվել սեմինար պարապմունքներ, իսկ կոմիտեի մասնագետների կողմից պարբերաբար մեթոդական օգնություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին և համապատասխան մասնագետներին:

Կազմակերպվել է հանդիպում պետական կոմիտեի նախագահ Կ. Պետրոսյանի և Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանի միջև, որին մասնակցում էին նաև երկու համակարգերի պատասխանատու մասնագետները: Հանդիպմանը քննարկվել են պետական կոմիտեի աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանում և

քաղաքապետարանի միջև համագործակցության ընթացքում ծագած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Հանդիպման արդյունքում կազմվել և երկկողմանի ստորագրվել է արձանագրության և համատեղ հրամանով ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ:

ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներին կողմից Արցախի ներդրումային հիմնադրամին մատուցվող ծառայությունների դիմաց վճարների գանձման առանձնահատկությունները սահմանելու նպատակով կոմիտեի նախագահի և Արցախի ներդրումային հիմնադրամի տնօրենի միջև ստորագրվել է համապատասխան աշխատակարգ:

Կաշենի հանքավայրի արդյունաբերական շահագործման նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նպատակով ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն համագործակցել է ԼՂՀ կառավարության հետ:

Դատական մարմինների հետ աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի դեմ ԼՂՀ առաջինատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում քննվել և քննվում է 34 գործ, որից 12-ը վարչական, իսկ 22-ը քաղաքացիական դատավարության կարգով:

2014թ. հունվարի 1-ի դրությամբ նշված գործերից՝ գործն ըստ Երևանի լուծող դատական ակտով ավարտվել է 12 գործ, ընդ որում՝ 2 գործով հայցապահանջը մերժվել է, 5 գործով հայցապահանջը բավարարվել է, 3 գործով գործի քննությունը կարճվել է, 2 գործով կողմերը կնքել են հաշտություն:

Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության գույքանիշներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կազմում գործում է «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որն իր գործունեությունն իրականացնում է 2 ուղղություններով՝ պետական բյուջեի միջոցների հաշվին և ձեռնարկատիրական գործունեություն (անշարժ գույքի չափագրում):

Հաշվետու տարում պետական բյուջեի միջոցների հաշվին «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» իրականացվել են 75966,8 հազ. դրամի չափով աշխատանքներ, իսկ ձեռնարկատիրական գործունեության, արդյունքում՝ 29176,0 հազ. դրամի չափով աշխատանքներ:

Վարչատնտեսական գործունեության գույքանիշներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի համակարգում աշխատողների թիվը կազմում է 117, ավտոտրանսպորտային միջոցների քանակը՝ 11, պահպանման ծախսերի ընդհանուր գումարը՝ 236 300 հազ. դրամ: